ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/60

ք. Երևան « 09 »« 12 » 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ն.Սիրեկանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 6 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1320000(Մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Ընդ որում՝

1-ին չափաբաժին 540000(Հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին 200000(Երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին 280000(Երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ,

4-րդ չափաբաժին 300000(Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ**
Ք. Երևան, Կառավարական տուն 2	**Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900001022848	**Հ/Հ 1930030206282300**
ՀՎՀՀ 02698732	**ՀՎՀՀ 05547385**
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
Վ. Գասպարյան	**Ն.Սիրեկանյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«09» 12 2021թ.
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/60 ծածկագրով պայմ...

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսվածչափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Մատուցման	
			Նախատեսվում է մատուցել				Հասցեն	Ժամկետը
1	50531140/2	փորձաքննության ծառայություն-1	**ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքի Մարմաշեն** վանական համալիրի ուսումնասիրման, ամրակայման (այդ թվում՝ կառույցների խոնավության հեռացման միջոցառումների) և տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերի և ծախսերի գնահատման փորձաքննության ծառայությունն ըստ Աղյուսակ N 1-ի (Փորձաքննության ծառայության մատուցման պայմաններն ու պահանջները):	դրամ	1	540000	ք. Երևան, Վ.Սարգսյան 3, ՀՀԿԳՄՍ նախարարություն	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացույցային օրը,** բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
2	50531140/4	փորձաքննության ծառայություն-2	**ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազի Սբ Աստվածածին** եկեղեցու որմնանկարների ամրակայման գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Փորձաքննության ծառայության մատուցման պայմաններն ու պահանջները):	դրամ	1	200000	• ք. Երևան, Վ.Սարգսյան 3, ՀՀԿԳՄՍ նախարարություն	**Նախագծերը ստանալու օրվանից 20-րդ օրացույցային օրը,** բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում

3	50531140/5	փորձաքննության ծառայություն-3	**ՀՀ Արագածոտնի մարզի Գարգարի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր** եկեղեցու ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Փորձաքննության ծառայության մատուցման պայմաններն ու պահանջները):	դրամ	1	280000	ք. Երևան, Վ.Սարգսյան 3, ՀՀԿԳՄՍ նախարարություն	**Ծառայությունը ստանալու օրվանից 20-րդ օրացույցային օրը,** բացառությամբ այն դեպքի երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
4	50531140/6	փորձաքննության ծառայություն-4	**ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի Հովհաննավանք** համալիրի պարսպապատերի, կից կառույցների նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Փորձաքննության ծառայության մատուցման պայմաններն ու պահանջները):	դրամ	1	300000	ք. Երևան, Վ.Սարգսյան 3, ՀՀԿԳՄՍ նախարարություն	**Նախագծերը ստանալու օրվանից 20-րդ օրացույցային օրը,** բացառությամբ այն դեպքի երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____Ն.Սիրեկանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Աղյուսակ 1
/Փորձաքննության ծառայության մատուցման պահանջներն ու պայմանները

Պահանջ/պայման	Նկարագրություն	Հիմք
Փորձաքննության ծառայության մատուցման պահանջները	Սահմանված կարգով հաստատված պետական ցանկերում ընդգրկված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների նախագծային փաստաթղթերը ենթակա են համալիր փորձաքննության պարտադիր կարգով բացառությամբ մոնումենտալ արվեստի անշարժ հուշարձանները, ինչպես նաև ամրակայման (կոնսերվացիա) ենթակա հնագիտական այն հուշարձանները, որոնք ՀՀԿԳՄՍ նախարարության եզրակացությամբ ենթակա չեն ամբողջական վերականգնման: Պետական և համայնքային բյուջեների՝ ներառյալ վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին, ինչպես նաև դրանց ներգրավմամբ իրականացվող ճարտարապետաշինարարական օբյեկտների նախագծերը պարտադիր կարգով փորձաքննության են ներկայացվում նախահաշվային փաստաթղթերի ներառմամբ: Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը փորձաքննության են ներկայացվում մեկ օրինակից/ աշխատանքային գծագրեր, ծախսերի գնահատում՝ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների նախահաշվային մաս/: Մինչև պայմանագրի կնքումը փորձաքննության ծառայություն մատուցողը պարտավոր է ստուգել ներկայացվող փաստաթղթերի փաթեթի կազմն ու ծավալը և համապատասխանության դեպքում կնքել պայմանագիրը: Անհամապատասխանության դեպքում փաստաթղթերը վերադարձվում են պատվիրատուին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու առաջարկով: Բոլոր տեսակի հաշվարկները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների գնահատման կարգ» -ին ու մեթոդական ցուցումներին,և **վերահաշվարկվեն** համաձայն համապատասխան տեղեկագրերի: Նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվում է փորձագիտական եզրակացություն: Եզրակացությունը հաստատվում է փորձաքննության ծառայություն մատուցողի ղեկավարի կողմից: Փորձաքննության ծառայություն մատուցողի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միմիայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով և **չեն կարող վերաբերել հուշարձանի նորոգման, ամրակայման կամ վերականգնման ընտրված մեթոդին:** Քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննությանը: **2,3,4 չափաբաժինների համար Պատվիրատուն նախագիծը փոխանցում է Կատարողին՝ դրանք Նախագծողից ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում** Փորձաքննության եզրակացությունը կարող է վիճարկվել դատական կարգով:	Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6 -ի N 711-Ն որոշում
Փորձաքննության ծառայության մատուցման պայմանները	**Փորձագիտականեզրակացությունը պետք է ներառի՝** 1) նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը. 2) նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է, 3) փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները, **Փորձագիտական եզրակացությունը կարող է եզրափակվել հետևյալ սահմանումներից մեկով՝** 1) «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին», որից հետևում է, որ նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատվել: Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացությունը: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում.	

2) «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», որից հետևում է, որ նախագիծը ենթակա է լրամշակման՝ ըստ եզրակացությունում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, որից հետո ճշտված և լրամշակված նախագծային փաստաթղթերի մասով այն պետք է պատվիրատուի կողմից ներկայացվի կրկնակի փորձաքննության: Լրամշակված նախագծի կրկնակի փորձաքննության համար ներկայացվում են փորձաքննության դիտողություններով փոփոխված նախագծային նյութերի վերաբերյալ բացատրագիրը՝ անհրաժեշտ հիմնավորումներով, նախորդ դիտարկումից հետո փոփոխված և լրացված նախագծային փաստաթղթերը.

3) «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին», որից հետևում է, որ տվյալ նախագիծը ենթակա է հիմնավոր վերամշակման և պետք է փորձաքննության ներկայացվի որպես նոր նախագիծ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ն.Սիրեկանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավ.
« 09 » 12 2021թ. կ.
ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-21/60 ծածկագրով պայմանագ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/2	Փորձաքննության ծառայություն-1												540000	540000
2	50531140/4	Փորձաքննության ծառայություն-2												200000	200000
3	50531140/5	Փորձաքննության ծառայություն-3												280000	280000
4	50531140/6	Փորձաքննության ծառայություն-4												300000	300000

** *հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

----------Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------Ն.Սիրեկանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար՝

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _07/12/21_____

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER	007052	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE	
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	,Կոնվերս Բանկե ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	198,000.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Մեկ հարյուր իննսունութ հազար դրամ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ Ֆինանս.նախ.	
59:	ՇԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY	Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձևով,ՀՀ ֆինանսների նախարարություն	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000698	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/60 ծածկագրով գնման պայմանագրի որակի ապահովում	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER ՀԱՇՎԵՏԵՐ

Seal Կ.Տ.

SIGNATURE ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՁՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	100.00 հայկական դրամ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Converse Bank CJSC
ՊԿ/ID 1365
07 DEC 2021
Կատարված է / Implemented
Գայանե Գայանե
Կարապետյան Karapetyan

*Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ընթացիկ և Խնայողական հաշիվների բացման և վարման կարգ	PR 72-01		
	Հավելված 9 Վճարման հանձնարարագրի օրինակելի ձև	Ամսաթիվ 22.05.17թ.	Խմբագրություն 12	1/75

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար՝

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _07/12/21_______________

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER		007051	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	Ա Ր Խ Ի Տ Ե Կ Տ Ս Պ Ը ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	,Կոնվերս Բանկե ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	132,000.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Մ ե կ հ ա ր յ ո ւ ր ե ր ե ս ո ւ ն ե ր կ ո ւ հ ա զ ա ր դ ր ա մ	
57:	ՄՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	Հ Հ Կ Բ գ ո ր ծ .վ ա ր չ ո ւ թ յ ո ւ ն /Հ Հ Ֆ ի ն ա ն ս . ն ա խ .	
59:	ՇԱՀԱՌՈՒ BENEFICIARY	Հ ա յ տ ի և պ ա յ մ ա ն ա գ ր ի ա պ ա հ ո վ ո ւ մ ը բ ա ն կ ա յ ի ն ե ր ա շ խ ի ք ո վ կ ա մ կ ա ն խ ի կ փ ո ղ ի ձ և ո վ	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000664	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	Հ Հ Կ Գ Մ Ս Ն Գ Հ Ծ Ձ Բ -21/60 ծ ա ծ կ ա գ ր ո վ պ ա յ մ ա ն ա գ ր ի ա պ ա հ ո վ ո ւ մ	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER
ՀԱՇՎԵՏԵՐ

Seal
Կ.Տ.

SIGNATURE
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	100.00 Հ ա յ կ ա կ ա ն դ ր ա մ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Converse Bank CJSC
ԴԿ/ID 1365
07 DEC 2021
Կատարված է / Implemented
Գայանե Կարապետյան / Gayane Karapetyan

** Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում*